

**ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 17**  
վիճակագրության պետական խորհրդի նիստի

16.11.2009թ.

ժ.11: 00

**Մասնակցում էին՝**

Ս.Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Գ.Գևորգյան, Յու.Պողոսյան, Ս.Դավթյան, Ա.Աղազարյան (*խորհրդի անդամներ*)

Հ. Գրիգորյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Գ.Մուրադյան (իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ), Լ. Պետրոսյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ), Դ.Մարտիրոսովա (տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ), Ա.Հարությունյան (առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ):

**Օրակարգի նախագծում` երեք հարց.**

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից` 2009 թվականի առաջին եռամսյակում իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանագրքով տվյալների բազան Համաշխարհային բանկի Երևանի գրասենյակին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող` Դ. Մարտիրոսովա /*

2. «ՀՀ ՎՊԽ 2004թ. դեկտեմբերի 29-ի թիվ 33-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

*/Զեկուցող` Ա. Հարությունյան/*

**3. Այլ հարցեր**

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

*/Քվեարկության արդյունքները-կողմ` 6, դեմ` 0, ձեռնպահ` 0/*

**Լսեցին՝**

«Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից` 2009 թվականի առաջին եռամսյակում իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանագրքով տվյալների բազան Համաշխարհային բանկի Երևանի գրասենյակին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող` Դ. Մարտիրոսովա /*

**Որոշեցին՝**

Ռոյլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին` Համաշխարհային բանկի Երևանի գրասենյակին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2009 թվականի առաջին եռամսյակում իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազան` զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ` 6, դեմ` 0, ձեռնպահ` 0/*

**Լսեցին՝**

2. «ՀՀ ՎՊԽ 2004թ. դեկտեմբերի 29-ի թիվ 33-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

*/Զեկուցող` Ա. Հարությունյան/*

**Որոշեցին՝**

1. Ուժը կորցրած ճանաչել Հայստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի դեկտեմբերի 29-ի «Օդային տրանսպորտով մատուցված ծառայությունների ծավալի մասին» Ձև թիվ 1-ԾԱՌ-ԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԶԱ) (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 33-Ն որոշման 1-ին կետը և այդ կետով հաստատված հավելվածը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2010 թվականի հունվարի 1-ից:

*/ՍճՆՍՅԻ ՀԻ/*

*/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ԶԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ